ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 23 անդամներ:

Բացակա էին՝ Անի Առաքելյանը, Լարիսա Թունյանը, Արսեն Հակոբյանը, Դավիթ Մուրադյանը, Սիմոն Պետրոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արմեն Բաղդասարյան, Մուշեղ Հակոբյան, Բաբկեն Բաբայան, Գեվորգ Մարգարյան, Վահրամ Կարապետյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ասլան Ավետիսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արթուր Մուսիկյանը

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 18-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ, 46-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետերի դրույթներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով, հիմք ընդունելով «Արարատի Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Գևորգ Մարգարյանի դիմումը՝ ***ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

Տալ համաձայնություն Արարատ համայնքում գործող «Արարատի Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն» հասարակական կազմակերպությանը «Բարեկարգ Երիտասարդական Կենտրոն» համալիր բարեկարգման ծրագիրն իրականացնելու համար Արարատի համայնքապետարանի բյուջեի «Հասարակական կազմակերպություններին աջակցություն» ծրագրից 5.000.000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ դրամաշնորհ հատկացնելուն:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 2-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԵՎ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.08.2015-ի թիվ 956-Ն,18.12.2014թ.-ի թիվ 1444-Ն որոշումները, առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրում ֆիզիկական անձանց 2025թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Հաստատել Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրում իրավաբանական անձանց 2025թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
3.Հաստատել Երասխ բնակավայրում ֆիզիկական անձանց 2025թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 3-ի:
4.Հաստատել Երասխ բնակավայրում իրավաբանական անձանց 2025թ-ի անշարժ գույքի հարկի փոխհատուցման գումարի չափը և ցուցակը՝ համաձայն հավելված 4-ի:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 7-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ԱՐԱՐԱՏ ՇԱՀՈՒՄՅԱՆ 36 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆ ՀՈԱԿ-Ի ՇԵՆՔԻՑ 29,0 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔ 5 (ՀԻՆԳ) ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 685-րդ հոդվածով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով «Մեր ապագան» Կրթամշակութային բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրենի դիմումը.
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Արարատ համայնքի սեփականությունը հանդիսացող, Արարատ քաղաքի Շահումյան 36 հասցեում գտնվող «Արարատ համայնքի Արարատ քաղաքի մշակույթի և արվեստի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքի առաջին հարկից 29,0 քմ մակերեսով տարածք 5 (հինգ) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամին՝ իր գործունեությունը ծավալելու նպատակով:
2.Համայնքի ղեկավարին՝ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 3-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՉԱՔԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Արարատ համայնքի սեփականություն հանդիսացող թիվ 27122024-03-0122 վկայականով գրանցված ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի գ.Արարատ բնակավայրի Ա.Գրիբոյեդովի փողոց 147/1, թիվ 27122024-03-0083 վկայականով գրանցված ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի գ.Սուրենավան բնակավայրի Երևանյան խճուղի 1/1 և թիվ 10012025-03-0043 վկայականով գրանցված ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի գ.Արմաշ 1 հասցեներում գտնվող գազատար խողովակաշարերն ու հենասյունները, բացի այդ թվով 2 (երկու) պահարանային գազակարգավորիչ կետ (ՊԳԿԿ) անժամկետ, անհատույց օգտագործման հանձնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության Արարատի ԳԳՄ-ի շահագործմանը:

2.Համայնքի ղեկավարին՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության հետ կնքել անժամկետ, անհատույց օգտագործման պայմանագիր:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 23-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 258-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն որոշմամբ հաստատված թիվ 1,2,3 հավելվածների:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 6-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը, ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման հաշվետվությունը՝ համաձայն 1,2,3 հավելվածների:

Կողմ-13 Դեմ-5 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 5-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդ և 16-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական կոմիտեի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 01//07885-2024 գրությունը, Արարատի մարզպետի 2025 թվականի հունվարի 7-ի N 01//00026-2025 գրությունը, հաշվի առնելով քաղաքացի՝ Գոռ Հենրիկի Թարվերդյանին դիմումը, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,Գոռ Հենրիկի Թարվերդյանի սեփականություն հանդիսացող, 03-015-0068-0029 կադաստրային ծածկագիրը կրող 0.0876 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից 0.02931 հա հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի՝ նկուղային մասով մեկ հարկանի կերերի վաճառքի կետ կառուցելու համար:
2.Վերոնշյալ հողամասի գործառնական նշանակությունը փոփոխված է համարվում հողամասերի նկատմամբ փոփոխված գործառնական նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալու պահից:

Կողմ-17 Դեմ-2 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՐՄԱՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդ և 16-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի երեսունի թիվ 2/փ-137 դրական եզրակացությունը,հաշվի առնելով քաղաքացի՝ Ռադիկ Կարապետյանի դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի գյուղ Արմաշ բնակավայրի Ա.Հայրիյան հասցեում գտնվող,Ռադիկ Կարապետյանի սեփականություն հանդիսացող, 03-019-0059-0005 կադաստրային ծածկագիրը կրող 0.104 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից 0.01 հա հատվածի նպատակային նշանակությունը փոխադրել՝ էներգետիկայի,տրանսպորտի,կապի,կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կապի հողամասի՝ բջջային կապի ալեհավաքի կառուցման համար:
2.Վերոնշյալ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխված են համարվում հողամասերի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալու պահից:

Կողմ-19 Դեմ-1 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 16-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՉԱՔԱՐՅԱՆ)

Արարատի համայնքապետարան է դիմել Սաշիկ Հասոյի Քալաշյանը իր և Արարատի մարզի գ.Արարատ բնակավայրի (Արարատ համայնք)միջև 10.04.2018 թվականին կնքված թիվ 1301 անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու խնդրանքով.
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Սաշիկ Հասոյի Քալաշյանի և Արարատի մարզի գ.Արարատ բնակավայրի (Արարատ համայնք) միջև 10.04.2018 թվականին կնքված թիվ 1301 անշարժ գույքի վարձակալության պայմանագրի 18-րդ կետը և հաշվի առնելով Սաշիկ Քալաշյանի դիմումը, *համայնքի ավագանին որոշում է.*

1.10.04.2018 թվականի թիվ 1301 անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգել 5(հինգ) տարի ժամկետով:
2.Համայնքի ղեկավարին՝ կնքել համաձայնագիր Սաշիկ Քալաշյանի հետ՝ 10.04.2018 թվականի թիվ 1301 անշարժ գույքի վարձակալության պայմանագրի մյուս պայմանները թողնելով անփոփոխ:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 9-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 4.266596 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 56-րդ հոդվածի 5-րդ, 66-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Անդրանիկ Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրված 03-066-0110-0057 կադաստրային ծածկագիրը կրող 4.266596 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը իրեն օտարելու մասին դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի՝ Անդրանիկ Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրված, համայնքային սեփականություն հանդիսացող,Նոյակերտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-066-0110-0057 կադաստրային ծածկագիրը կրող 4.266596 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրանց:
2.Հողամասի օտարման գին սահմանել ------ ՀՀ դրամ :

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 1.51062 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 56-րդ հոդվածի 5-րդ, 66-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Անդրանիկ Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրված 03-066-0110-0055 կադաստրային ծածկագիրը կրող 1.51062 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը իրեն օտարելու մասին դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի՝ Անդրանիկ Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրված, համայնքային սեփականություն հանդիսացող,Նոյակերտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-066-0110-0055 կադաստրային ծածկագիրը կրող 1.51062 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրանց:
2.Հողամասի օտարման գին սահմանել ------ ՀՀ դրամ :

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 10 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 56-րդ հոդվածի 5-րդ, 66-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Անդրանիկ Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրված 03-066-0110-0056 կադաստրային ծածկագիրը կրող 10 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը իրեն օտարելու մասին դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Քաղաքացի՝ Անդրանիկ Պողոսյանին վարձակալության իրավունքով տրամադրված, համայնքային սեփականություն հանդիսացող,Նոյակերտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-066-0110-0056 կադաստրային ծածկագիրը կրող 10 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրանց:
2.Հողամասի օտարման գին սահմանել ------ ՀՀ դրամ :

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԻՍԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի, 82.1--րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Արարատ համայնքի ինգամյա /2022-2026/ զարգացման ծրագիրը՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Արարատ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 24-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԲԱԲԿԵՆ ԲԱԲԱՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով, ելնելով անհրաժեշտությունից՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1.Արարատ համայնքի ավագանու 2024թվականի նոյեմբերի 12-ի «Արարատ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2025 թվականի համար հաստատելու մասին» N 218-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններ՝
ա) Որոշման Հավելված 2-ում ավելացնել հոգեբանի հաստիք՝ դրույքաչափը սահմանելով 110 000 ՀՀ դրամ:
բ) Որոշման հավելված 13-ում ավելացնել կազմակերպչական գծով տնօրենի տեղակալի հաստիք՝ դրույքաչափը սահմանելով 120 000 ՀՀ դրամ:
2.Հաստատել «Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մովսես Գորգիսյանի անվան թիվ 2 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների նոր հաստիքացուցակը՝ համաձայն կից հավելված 2-ի:
3.Հաստատել «Արարատ քաղաքի Ղազարոս Սարյանի անվան ՄՄԱԴ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների նոր հաստիքացուցակը՝ համաձայն կից հավելված 13-ի:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-5

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 4-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՆԳՎԱԾ 17 ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԵՎԻԿ ԴԱԴԱՅԱՆ)

Արարատի համայնքապետարան է դիմել Արարատ քաղաքի Արարատյան զանգված 17 շենքի բնակարան 3 հասցեի բնակիչ՝ Իվետա Ադոլֆի Սաֆարյանը իր զբաղեցրած բնակարանը իր ընտանիքին նվիրելու դիմումով: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով, որ Արարատյան զանգված 17 շենքի բնակարան 3 հասցեի բնակարանը հատկացվել է Իվետա Ադոլֆի Սաֆարյանի ընտանիքին՝ ինքը,աղջիկները՝ Էլեոնորա Գեորգիի Սաֆարյան,Սոֆյա Գեորգիի Սաֆարյան, որդիները՝ Բագրատ Գեորգիի Սաֆարյան և Արմեն Գեորգիի Սաֆարյան, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի Արարատ քաղաքի Արարատյան զանգված 17 շենքի բնակարան 3 հասցեի բնակարանը նվիրել այդ բնակարանում բնակվող՝ Իվետա Ադոլֆի Սաֆարյանի ընտանիքին՝ ինքը,աղջիկները՝ Էլեոնորա Գեորգիի Սաֆարյան,Սոֆյա Գեորգիի Սաֆարյան, որդիները՝ Բագրատ Գեորգիի Սաֆարյան և Արմեն Գեորգիի Սաֆարյան:
2.Համայնքի ղեկավարին՝ նվիրատվության հետ կապված աշխատանքները կազմակերպել գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 8-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Արարատի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 20-ի N01//08177-2024 գրությունը և «ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մեքենաների գնահատման արդյունքները ՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ CHEVROLET NIVA 212300-55 մակնիշի, 024 CM 61 համարանիշի, 2015թ. թողարկման, 2014թ. թողարկման, NISSAN SUNNY 1.5 մակնիշի, 025 CM 61 համարանիշի, 2012թ. թողարկման, VAZ 21214-120-40 մակնիշի,377 CN 61 համարանիշի, 2013թ. թողարկման, VAZ21214 մակնիշի, 020 CM 61 համարանիշի, 2008թ. թողարկման ,VAZ21214-126-20 մակնիշի, 075 DF 61 համարանիշի, 2008թ., NISSAN SENTRA 1.8 մակնիշի, 073 CN 61 համարանիշի, 2014թ. թողարկման, ԳԱԶ-3102-801 մակնիշի, 023 CM 61 համարանիշի, 2008թ. թողարկման ավտոմեքենաները:

2.Ավտոմեքենաների մեկնարկային գինը սահմանել «ԱՐՄԷՔՍՊԵՐՏԻԶԱ» ՍՊԸ-ի կողմից գնահատված արժեքը՝ /Հավելված 1, Հավելված 2, Հավելված 3, Հավելված 4 և Հավելված 5,Հավելված 6,Հավելված 7,Հավելված/, նախավճար սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով, մասնակցության վճար՝5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:

3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության

օրենսդրության պահանջներին համապատասխան:

4. Աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդի մեկնարկային գինը նվազեցնել 10%-ի չափով՝ յուրաքանչյուր լոտի համար, բայց ոչ պակաս քան յուրաքանչյուր լոտի 50%-ի չափով:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՐՄԱՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի 9-րդ, 15-րդ և 16-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի քսանյոթի թիվ 2/փ-32 դրական եզրակացությունը,հաշվի առնելով քաղաքացի՝ Աշոտ Աբրահամյանի դիմումը,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Արարատ համայնքի գյուղ Արմաշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի՝ Աշոտ Աբրահամյանի սեփականություն հանդիսացող, 03-019-0237-0115 կադաստրային ծածկագիրը կրող 1.11874 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության(0.0584 հա բազմամյա տնկարկ,0.0416 հա վարելահող) հողամասից 0.1 հա հատվածի նպատակային նշանակությունը փոխադրել՝բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի՝բնակելի տան կառուցման համար:
2.Վերոնշյալ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխված են համարվում հողամասերի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալու պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով՝ ***Արարատ համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել նիստի հետևյալ օրակարգը.
1) Արարատ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 14-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Արարատի Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն հասարակական կազմակերպությանը դրամաշնորհ տրամադրելու մասին:
3) Արարատ համայնքի սեփականությունը հանդիսացող քաղաք Արարատ Շահումյան 36 հասցեում գտնվող «Արարատ քաղաքի մշակույթի և արվեստի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքից 29,0 քմ մակերեսով տարածք 5 /հինգ/ տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով «Մեր ապագան» կրթամշակութային բարեգործական հիմնադրամին հատկացնելու մասին:
4)Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի ավագանու

2024թվականի թիվ 158-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
5) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2024 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման արդյունքների մասին:
6) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի հոդվածներում փոփոխություն կատարելու մասին:
7) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի սահմանամերձ Պարույր Սևակ և Երասխ բնակավայրերի ֆիզիկական և իրավաբանական անձանց անշարժ գույքի հարկի ցուցակները հաստատելու և գումարները փոխհատուցելու մասին:
8) Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:
9) Արարատ համայնքի գյուղ Արմաշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
10) Արարատ համայնքի գյուղ Արմաշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
11) Արարատ համայնքի Արարատ քաղաք Ղուկասյան 1/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-002-0020-075 կադաստրային ծածկագրիը կրող 0.05098 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
12) Արարատ համայնքի Արարատ քաղաք Մուրացան 14/1 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-002-0034-0014 կադաստրային ծածկագրիը կրող 0.08331 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
13) Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՈԿՖ բանավան թաղամաս 22/5 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-002-0060-0013 կադաստրային ծածկագրիը կրող 0.04194 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
14) Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-015-0050-0078 կադաստրային ծածկագիրը կրող 0.03849հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
15) Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-015-0452-0032 կադաստրային ծածկագիրը կրող 0.4491 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարքը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
16) Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-042-0209-0003 կադաստրային ծածկագիրը կրող 0.25011 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության կորիզավոր հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
17) Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 03-042-0019-0011 կադաստրային ծածկագիրը կրող 1.0111 հա մակերեսով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
18) Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավյրերի բնակելի կառուցապատման հողամասերը աճուրդ վաճառքի կարգով օտարելու մասին:
19) Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու մասին:

20)Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման տրամադրման մասին:
21) Արարատ համայնքի Արարատ քաղաքի Արարատյան զանգված 17 շենքի բնակարան 3 հասցեում գտնվող գույքի նվիրատվության մասին:
22) Անշարժ գույքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին:
23) Արարատ համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմեքենաները աճուրդ վաճառքով օտարելու մասին:
24) «ԱՌԱՓ» ՍՊԸ-ի կողմից ընդերքի օգտագործման համար անհրաժեշտ աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
25) Արարատ համայնքի 2025թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

Կողմ-14 Դեմ-7 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 1-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-002-0020-0175 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻԸ ԿՐՈՂ 0.05098 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Արարատ քաղաքի Ղուկասյան 1/3 հասցեում գտնվող,/ծածկագիր՝ 03-002-0020-0175/ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.05098 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Արարատ քաղաքի Ղուկասյան 1/3 հասցեում գտնվող, 03-002-0020-175 կադաստրային ծածկագրիը կրող 0.05098 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 2500 ՀՀ դրամ 1քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-15 Դեմ-7 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՐԱՑԱՆ 14/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-002-0034-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.08331 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Չեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մուրացան փողոց 14/1 հասցեում գտնվող,/ծածկագիր՝ 03-002-0034-0014/ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.08331 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Արարատ քաղաքի Մուրացան փողոց 14/1 հասցեում գտնվող, 03-002-0034-0014 կադաստրային ծածկագրից 0.08331 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 2500 ՀՀ դրամ 1քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-15 Դեմ-7 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՈԿՖ ԲԱՆԱՎԱՆ ԹԱՂԱՄԱՍ 22/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-002-0060-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.04194 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Չեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՈԿՖ բանավան թաղամաս 22/5 հասցեում գտնվող,/ծածկագիր՝ 03-002-0060-0013/ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0.04194 հա մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Արարատ քաղաքի ՈԿՖ բանավան թաղամաս 22/5 հասցեում գտնվող, 03-002-0060-0013 կադաստրային ծածկագրից 0.04194 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 2500 ՀՀ դրամ 1քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի

Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-15 Դեմ-1 Ձեռնպահ-7

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 15-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-015-0050-0078 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.03849 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-015-0050-0078/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.03849 հա մակերեսով այլ հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-015-0050-0078 կադաստրային ծածկագիրը կրող 0.03849 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 200000 ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-8 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 17-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-042-0209-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.25011 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՐԻՁԱՎՈՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-042-0209-0003/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.25011 հա մակերեսով կորիզավոր հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Երասխ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-042-0209-0003 կադաստրային ծածկագիրը կրող 0.25011 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության կորիզավոր հողամասը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 250000 ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-13 Դեմ-8 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 19-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՍԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-042-0019-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 1.0111 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ,ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Երասխ բնակավայրի Արաքսի փողոց 1-ին փակուղի 6 հասցեում գտնվող,/ծածկագիր՝ 03-042-0019-0011/ համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 1.0111 հա մակերեսով արդյունաբերական օբյեկտների հողամասը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Երասխ բնակավայրի Արաքսի փողոց 1-ին փակուղի 6 հասցեում գտնվող, 03-042-0019-0011 կադաստրային ծածկագիրը կրող 1.0111 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 400 ՀՀ դրամ 1քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 20-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերը ենթակա են աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հետևալ հողամասերը.
1) 1-ին փողոց 8 հասցեում գտնվող 03-078-0002-0008 կադաստրային ծածկագիրը կրող 0.09488 հա մակերեսով հողամասը:
2) 1-ին փողոց 13 հասցեում գտնվող 03-078-0001-0008 կադաստրային ծածկագիրը կրող 0.07647 հա մակերեսով հողամասը:
3) 1-ին փողոց 15 հասցեում գտնվող 03-078-0001-0007 կադաստրային ծածկագիրը կրող 0.104 հա մակերեսով հողամասը:
4) 1-ին փողոց 17 հասցեում գտնվող 03-078-0001-0006 կադաստրային ծածկագիրը կրող 0.0998 հա մակերեսով հողամասը:
5) 1-ին փողոց 19 հասցեում գտնվող 03-078-0001-0005 կադաստրային ծածկագիրը կրող 0.10545 հա մակերեսով հողամասը:
6) 1-ին փողոց 21 հասցեում գտնվող 03-078-0001-0004 կադաստրային ծածկագիրը կրող 0.09725 հա մակերեսով հողամասը:
7) 1-ին փողոց 23 հասցեում գտնվող 03-078-0001-0003 կադաստրային ծածկագիրը կրող 0.09058 հա մակերեսով հողամասը:
8) 5-րդ փողոց 1/6 հասցեում գտնվող 03-078-0009-0031 կադաստրային ծածկագիրը կրող 0.09177 հա մակերեսով հողամասը:
9) 5-րդ փողոց 1/7 հասցեում գտնվող 03-078-0009-0060 կադաստրային ծածկագիրը կրող 0.10135 հա մակերեսով հողամասը:
10) 5-րդ փողոց 1/8 հասցեում գտնվող 03-078-0009-0029 կադաստրային ծածկագիրը կրող 0.09138 հա մակերեսով հողամասը:
2.Նշված տարածքների օտարման մեկնարկային գին սահմանել 350 ՀՀ դրամ 1 քմ-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 21-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրեր,այլ հողատեսքերը ենթակա են մրցույթով վարձակալության տրամադրելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ և 76-րդ հոդվածների պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով,***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն մրցութային կարգով 10 տարի ժամկետով Արարատ համայնքի Պարույր Սևակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հետևյալ հողամասերը՝
1) Լոտ ծածկագիր 03-078-0039-0020 11.68411 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, արոտավայրը:
2) Լոտ ծածկագիր 03-078-0039-0024 11.3974 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրը,այլ հողատեսքը:
3) Լոտ ծածկագիր 03-078-0039-0021 5.72783 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայրը:
2.Նշված հողատարածքի վարձավճարի մեկնարկային գին սահմանել 5000 ՀՀ դրամ 1 հա-ի համար, նախավճար սահմանել մեկնարկային գնի 5 %-ի չափով,մասնակցության վճար՝ 5000 ՀՀ դրամ,մրցութային քայլի չափը մեկնարկային գնի 5%-ի չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ մրցույթի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 22-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՐԱՐԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-015-0452-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐԸ ԿՐՈՂ 0.4491 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԵՆ ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ)

Համաձայն տեղազննության արդյունքների,Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող,/ծածկագիր՝ 03-015-0452-0032/ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.4491 հա մակերեսով խոտհարքը ենթակա է աճուրդ վաճառքով օտարելու և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ և 68-րդ հոդվածներով,առաջնորդվելով ավագանու կանոնակարգով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Աճուրդ վաճառքով օտարել Արարատ համայնքի գյուղ Արարատ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 03-015-0452-0032 կադաստրային ծածկագիրը կրող 0.4491 հա մակերեսով,համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարքը:
2.Նշված տարածքի օտարման մեկնարկային գին սահմանել 300000 ՀՀ դրամ, նախավճար սահմանել մեկնարկային գնի 50 %-ի չափով, մասնակցության վճար՝ 5000 դրամ, աճուրդային քայլի չափը մեկնարկային գնի 5%չափով:
3.Համայնքի ղեկավարին՝ աճուրդ վաճառքի հետ կապված աշխատանքները կազմակերպել սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարվա ընթացքում Հայաստանի

Հանրապետության«Հողային օրենսգրքի» և գործող նորմատիվ ակտերի պահանջներին համապատասխան:

Կողմ-14 Դեմ-6 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 18-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՌԱՓ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՄՈՒՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N 2343-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 15-ին Արարատ համայնքի Նոյակերտ բնակավայրում «ԱՌԱՓ » ՍՊԸ-ի կողմից անցկացված հանրային քննարկման առաջին փուլի արձանագրությունը,***Արարատ համայնքի ավագանին որոշում է.***

Տալ նախնական համաձայնություն «ԱՌԱՓ » ՍՊԸ-ի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ՀՀ Արարատի մարզի Նոյակերտի ԱԿԽ հանքավայրի «Առափ-1»տեղամասում կատարվելիք ընդերքի օգտագործման համար անհրաժեշտ աշխատանքների վերաբերյալ 1-ին հանրային քննարկմանը:

Կողմ-11 Դեմ-9 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 25-Ա)*

Ավագանու անդամներ

ԿԱՐԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՖԻՐԴՈՒՍ ՋԱՔԱՐՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՋԵՅՆԱԼՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆ

ԱՍՊՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌԻՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՄԱՆՎԵԼՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

ՍԵՐԳՈ ՄԻՆԱՍՅԱՆ

ԳԵՂԱՄ ՍԻՆԱՆՅԱՆ

ԱՎԱԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արթուր Մուսիկյանը